Փողոցը լի է կեանքով:

Փափուկ գետնի վրայով արագ սլանում են ճարպիկ ջիները, քաշելով իրանց փոքրիկ կառքերի մէջ մի կոկետ ճապոնուհու կամ տուրիստների մի ամբողջ շարք:

Անց է կենում մանրավաճառը, կրելով իր ուսին՝ փայտից կախած զամբիւղները, որոնք լիքն են ամեն տեսակ բանջարեղէնով, պտուղով կամ ձկնով:

Փողոցում անասուն գրեթէ չես տեսնի: Սակաւ, շատ սակաւ է հանդիպում մի ձի կամ եզ, սմբակները յարդով կապած պայտի փոխարէն: Տիրոջ ցոյց տւած մեծ հոգածութիւնից պարզ երեւում է, որ նրանք մի առօրեայ երեւոյթ չեն ճապոնացու կեանքում:

Ահա մի փոքրիկ աղջիկ անփոյթ կերպով իր լայն գօտու մէջ տանում է փոքրիկ եղբօրը, որը հանգիստ նիրհում է նրա մէջքին. մինչդեռ աղջիկը հետաքրքրութեամբ կանգ է առնում գոյնզգոյն ապակէ գնդակների դէմ, որ ծախու է դրել փողոցում թափառական մանրավաճառը:

Երիտասարդ ճապոնուհիները մանր քայլերով զգոյշ անց են կենում, իրանց բարձր փայտէ կօշիկները շարունակ թխթխկացնելով: Նրանց մուգ սեւ մազերի գեղեցիկ շինեօնը հիւսւած է կօրալներով. գլխարկ երբէք չկայ. պաշտպանւում են արեւից ու անձրեւից իրանց տարօրինակ ու գեղեցիկ հովանոցներով: Հագի կիրիմօնը (խալաթ) գրկում է ճապոնուհու ճկուն մէջքը, սահում է ցած ու պինդ փաթաթւում նրա ոտներին: Զունեն ոչ օղ, ոչ մատանի, ոչ էլ ընդհանրապէս մեր կանանցից այդչափ սիրւած միւս ոսկեղէն զարդերը:

Նրանց գլխավոր հպարտութիւնն է կազմում գեղեցիկ օբին (գօտի), որ լայն շերտով մի քանի անգամ գալարւած է